# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
# ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

| հ/հ | Միջոցառման անվանում | Ժամկետ | Պատասխանատուներ |
|---|---|---|---|
| *Ըստ ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտահետազոտական գործունեության ոլորտների* | | | |
| 1 | 14-րդ ամենամյա գիտաժողովը նվիրել Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին, իրականացնել հետևողական աշխատանք` հանրապետության և արտերկրի բուհերից գիտնականների մասնակցությունն ապահովելու նպատակով: | սեպտեմբեր-դեկտեմբեր | ռեկտորատ, գիտաժողովի կազմկոմիտե |
| 2 | Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների համար մշակել և ներդնել ուսուցման ելքային արդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի հայեցակարգեր: | սեպտեմբեր-հունվար | ֆակուլտետների մեթոդական խորհուրդներ, դեկաններ |
| 3 | Շարունակել ուշադրության կենտրոնում պահել մագիստրոսական ծրագրերում նախատեսված գիտական սեմինարը և գիտահետազոտական պրակտիկաները, ուսանողական գիտական կոնֆերանսներին մագիստրոսների գիտական զեկուցումներով հանդես գալը: Ռեկտորատ ներկայացնել ուսանողների զեկուցումների ժամանակացույցը: | սեպտեմբեր-մայիս, փետրվարի 12 | ամբիոնների վարիչներ, դեկաններ, մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ |
| 4 | Կազմակերպել անգլերենի ուսուցման և համակարգչային դասընթացներ բակալավրիատում և մագիստրատուրայում բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողների համար: Ռեկտորատ ներկայացնել դասընթացների անցկացման ժամանակացույցը: | սեպտեմբեր-մայիս | դեկաններ, ԱՔՎ, ՀՏՇԲ, Օտար լեզուների ամբիոն |
| 5 | Աջակցել ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի աշխատանքներին` ուսանողների մոտ զարգացնելու նախաձեռնողական և ինքնակազմակերպման կարողություններ, հետազոտական հմտություններ: Ռեկտորատ ներկայացնել ուսանողական գիտական կոնֆերանսների ժամանակացույցը: | սեպտեմբեր-մայիս | ՈՒԳԸ, ուս. խորհուրդ, ամբիոնների վարիչներ, դեկաններ |
| 6 | Ապահովել համալսարանի դասախոսների մասնակցությունը առցանց գիտաժողովներին և վերապատրաստումներին: | սեպտեմբեր-մայիս | ռեկտորատ, հանրության հետ կապերի և լրատվության բաժին |
| 7 | Անցկացնել հարցումներ ուսանողների շրջանում համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության, ինչպես նաև կրթական ծրագրերի հայեցակարգերում նախապես սահմանված կրթական ելքային արդյունքների հասանելիության վերաբերյալ: | սեպտեմբեր-մայիս | ԱՔՎ-ի որակի ապահովման բաժին, դեկանատներ |
| 8 | Շարունակել կրթական գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների բանկի համալրման աշխատանքները, ստեղծել էլեկտրոնային գրադարան և էլեկտրոնային արխիվ: | սեպտեմբեր-մայիս | հանրության հետ կապերի և լրատվության բաժին, ԳՊՀ գրադարան |
| 9 | Վերանայել բազմագործոն գնահատման համակարգը և վերաարժևորել գնահատման գործոններին տրվող կշիռները: | փետրվար-մարտ | ամբիոնների վարիչներ, դեկանատներ, ռեկտորատ |
| 10 | Ստեղծել և կիրարկել դասընթացներին ուսանողների գրանցման, նրանց անձնական, ուսումնական առաջադիմության տվյալների մուտքագրման ու մշակման, ակադեմիական տեղեկագրի, դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական | փետրվար-մայիս | ԱՔՎ-ի որակի ապահովման բաժին, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՀՏՇԲ |

| | | | |
|---|---|---|---|
| | էլեկտրոնային համակարգ: | | |
| 11 | Ներմուծել համալսարանում կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվողականության նոր ձևաչափ, ապահովել մասնագիտական ամբիոնների հաշվետվությունները, և կրթական ծրագրերի զարգացման հայեցակարգերի մշակումն ու ներկայացումը: Ռեկտորատ ներկայացնել ամբիոնների վարիչների հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը: | փետրվար-հունիս, փետրվարի 12 | ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ռեկտորատ |
| 12 | Անցկացնել հարցումներ շրջանավարտների, գործատուների շրջանում համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության, ինչպես նաև կրթական ծրագրերի հայեցակարգերում նախապես սահմանված կրթական վերջնարդյունքների հասանելիության վերաբերյալ: | փետրվար – օգոստոս | հանրության հետ կապերի և լրատվության բաժին |
| 13 | Համադրել առարկայական ծրագրերում սահմանված կրթական վերջնարդյունքները և ուսանողների փաստացի ձեռքբերված կոմպետեցիաները` ուսանողների շրջանում անցկացված ինքնագնահատականի և թեստային եղանակով քննությունների արդյունքների վերլուծությամբ, իսկ ուսումնառության ավարտին` կրթական ծրագրի նախատեսված ելքային արդյունքների ու ամփոփիչ ատեստավորման արդյունքների համադրությամբ գնահատել շրջանավարտների փաստացի ձեռք բերած կոմպետենցիաները: | փետրվար-օգոստոս | ԱՔՎ-ի որակի ապահովման բաժին |
| 14 | Եվրոպական չափորոշիչներին համապատասխան ուղղություններով անցկացնել բուհի ենթակառուցվածքային ինքնավերլուծություն, մշակել և ներդնել որակի բարձրացմանը միտված նոր կառուցակարգեր: | փետրվար-օգոստոս | ամբիոնների վարիչներ, դեկաններ, ԱՔՎ, ռեկտորատ |
| 15 | Քննությամբ ավարտվող դասընթացների համար ստեղծել քննական թեստերի բանկ, ամփոփիչ քննությունները անցկացնել համակարգչային, թեստային եղանակով: Համադրել ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերը` ավանդական և համակարգչային թեստավորման եղանակով, վերլուծել արդյունքները: | ապրիլ-մայիս | ամբիոնների վարիչներ, դեկաններ, ԱՔՎ, դասախոսներ |
| 16 | Բազմազանեցնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններում ընտրովի դասընթացները` ապահովելով այդ դասընթացների նկարագրությունները, ամրագրելով ակնկալվող ելքային արդյունքները: | ապրիլ-օգոստոս | ամբիոնների վարիչներ, մեթոդական խորհուրդներ |
| 17 | Իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ` ուղենիշ ունենալով որակավորումների եվրոպական շրջանակի չափանիշները: | հունիս-օգոստոս | կրթական ծրագրերի ղեկավարներ, դեկաններ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր |
| 18 | Ուսանողների, շրջանավարտների շրջանում կատարված հարցումների արդյունքները, շահառուների պահանջները, գործատուների կողմից արված առաջարկությունները ներառել ուսումնական պլաններում և առարկայական ծրագրերում` կրթության արդիականացման, շրջանավարտների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնման նպատակով: | հունիս-օգոստոս | կրթական ծրագրերի ղեկավարներ, ամբիոնների վարիչներ, դեկաններ, պրակտիկաների ղեկավարներ |
| | ***Դասախոսական կազմի մասնագիտական աճի ապահովմանն ուղղված աշխատանքներ*** | | |
| 19 | Շարունակել դասախոսական և վարչական անձնակազմի վերապատրաստումները` անգլերենի ուսուցման, համակարգչային, էլեկտրոնային ուսուցման, կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և ուսումնական գործընթացում ներդնելու հմտությունների ձևավորման և մասնագիտական աճի նպատակով: | սեպտեմբեր-մայիս | ռեկտորատ |
| 20 | Ապահովել դասախոսների համար պայմաններ` զբաղվելու գիտահետազոտական աշխատանքով մասնակցելու տարբեր գիտական ծրագրերի իրականացմանը: | սեպտեմբեր-մայիս | ռեկտորատ |

| | | | |
|---|---|---|---|
| **21** | Շարունակել ուսանողների շրջանում հարցումների անցկացումը, դասատվության, գործնական աշխատանքների անցկացման, ուսանող-դասախոս հարաբերությունների գնահատման վերաբերյալ, ամփոփել արդյունքները, խրախուսել ուսանողների կողմից առավել բարձր գնահատականների արժանացած դասախոսներին: | սեպտեմբեր-հունիս | դեկաններ, ԱՔՎ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր |
| **22** | Շարունակել դասախոսներին էլեկտրոնային հասցեների տրամադրման և համացանցային էջերի բացման աշխատանքները՝ խրախուսելով ուսանող-դասախոս էլեկտրոնային հաղորդակցությունը: | սեպտեմբեր-օգոստոս | ՀՏՇԲ, տնտեսական գծով պրոռեկտոր |
| **23** | Երիտասարդ մասնագետներին աջակցել՝ լավագույն փորձի փոխանցման, ուսուցման և ուսումնառության նորագույն մեթոդների տիրապետման ու կիրառման, դասընթացների առարկայական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման մեթոդաբանության լուսաբանման, մեթոդական, մանկավարժական, մասնագիտական օգնության միջոցով: | դեկտեմբեր-մայիս | ֆակուլտետային մեթոդ խորհուրդներ, դեկաններ, ամբիոնների վարիչներ |
| ***Հանրության հետ կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ*** | | | |
| **24** | Կնքել համաձայնագրեր և պայմանագրեր տարածաշրջանում գործող ուսումնական, գիտական, կրթական, հասարակական, երիտասարդական, մշակութային կազմակերպությունների հետ՝ ընդլայնելու ուսանողների ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաների անցկացման բազաները: | սեպտեմբեր-մայիս | հանրության հետ կապերի և լրատվության բաժին, ուսումնագիտական գծով պրոռեկտոր |
| **25** | «Համալսարանական ժամ» եթերաժամի շրջանակում ողջ ուսումնական տարվա ընթացքում հանրությանը իրազեկել՝ ապահովելով համալսարանի կրթական ծրագրերի, կառուցվածքային ստորաբաժանումների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, դասախոսական կազմի, լրացուցիչ կրթական ծառայությունների, ուսումնական ռեսուրսների, կանոնակարգային հենքի, համալսարանի բարերարների, միջազգային կապերի և այլ բնույթի հանրությանը հետաքրքրող համալիր տեղեկատվությամբ: | սեպտեմբեր մայիս | հանրության հետ կապերի և լրատվության բաժին |
| **26** | Շարունակել համագործակցությունը տարածաշրջանում գործող ավագ և հիմնական դպրոցների հետ, ակտիվացնել աշակերտների կապը համալսարանի հետ, լուսաբանել համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը աշակերտների շրջանում, օգնել նրանց՝ մասնագիտական կողմնորոշման հարցում: | հոկտեմբեր-մայիս | ռեկտորատ, հանրության հետ կապերի և լրատվության բաժին |
| **27** | Շարունակել ուսումնասիրությունները աշխատաշուկայում, հավաքագրել շրջանավարտ-մասնագետներին ներկայացվող, գործատուների պահանջները, համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի, ուսումնական պլանների վերաբերյալ նրանց առաջարկությունները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում գործատուների ներկայացուցիչներին ներգրավելու նպատակով: | փետրվար-մարտ | հանրության հետ կապերի և լրատվության բաժին |
| **28** | Համալսարանի ինտերնետային կայքում ստեղծել տարբեր տարիների ԳՊՀ շրջանավարտների տեղեկատվական բազա, հետևել նրանց հետագա մասնագիտական աճին ու ծառայողական առաջխաղացմանը: | հունիս | հանրության հետ կապերի և լրատվության բաժին, ուսումնագիտական գծով պրոռեկտոր |